ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

<<ԳՅՈՒՄՐՈՒ
ԻՆՖԵԿՑԻՈՆ-ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԱՅԻՆ
ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ՓԲԸ

REPUBLIC OF ARMENIA
SHIRAK REGION

<GYMRI
INFECTION-ANTITUBERCULOSIS
HOSPITAL>> CSJC

3108 ք. Գյումրի Շիրակացի 21
հեռ/0312/ 3-03-31
էլ. փոստ. inftubhospital@mail.ru

Shirakatsi str.21,3108 Gjumri
tel+374-312-3-03-31
e-mail inftubhospital@mail.ru

<<16>> հունվարի 2014թ

N 04-15

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում ԳԻՀՀ-ՇՀԱՊՁԲ-11/4-3:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Գյումրի, Շիրակացի 21 հասցեով, մինչև 2015թ. հունվարի 29-ը, ժամը 11$^{00}$-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Գ. Ասատրյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ-ի շենքում, Շիրակացի 21 հասցեով, N 2 սենյակում, 2015թ. հունվարի 29-ին, ժամը 11$^{00}$-ին:

Գնման առարկա է հանդիսանում <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ-ի կարիքների համար՝ Դեղորայք և պատվաստանյութերի ձեռքբերումը:

<<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ-ի կարիքների համար՝ Դեղորայք և պատվաստանյութերի մատակարարման (որոնք կազմված են՝ 106 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ inftubhospital@mail.ru:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով՝

Գնահատող հանձնաժողովի նախագահի Կ. Տոնոյան